

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Маск».
կամ Tiflis. Rédaction «Maschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն շաբաթ:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՎՈՒԹԻՒՆ

Ամառային մեղմութիւն.— Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ Ալեքսանդրապոլից. Նամակ Նոր-
բայրի. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արեւելեան հարց. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.— ՀԵՌԱՎԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պահանջ գրականու-
թիւնից.

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆ

Մարդս հասարակական էակ է և հասա-
րակական կեանք կայ միայն այնտեղ, որ-
տեղ մարդիկ ապրում, գործում են, մի-
մեանց մէջ ամեն կերպ մրցում են: Հասա-
րակական մեծ կենտրոններում, քաղաքնե-
րում, միջոց սկսում է մի տեսակ անշար-
ժութիւն, նոյն իսկ մեծութիւն տիրել,
հէնց որ հասնում է ամառը: Ամառվայ
շրջը տրամադրում է դէպի հանգիստ, դէ-
պի քնաթաթալ, անշարժ գրութիւն...
Մարդիկ կորցնում են իրանց սովորական
կենտրոնները, եռանդը, ձգտում են հեռանալ
մեծ կենտրոններից և հանգիստ վայելի
քնուկեան ծոցում: Ամենքը ցրվում են այլ
և այլ ամառանոցներ և մեծ քաղաքը դը-
թէ ամայի է դառնում: Եւ եթէ քաղաք-
ներում մնում է ամառը, ստորին և միջին
դասակարգերի մեծամասնութիւնը, որ հը-
նար և միջոց չունի թողնել քաղաքային
կեանքը,— հասարակութեան մէջ գործող,
նրա մէջ որ և է հասարակաց դեր խաղա-
ցող, նշանակութիւն ունեցող անհատներ
հեռանում են քաղաքներից և ցրվում են
այլ և այլ ամառանոցներ ու գիւղեր...
Հասարակական կեանքը իր գլխավոր ար-
տայայտութիւններում կարծես կանգ է առ-
նում մի երկու ամսով: Չը կան այլ և այլ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԱՍԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Առաջադիմութեան նպատակն է համեմատել մարդ-
կային բնական ու առողջ ձգտումներին: Որպէս
անհատական, նոյնպէս մի և նոյն ժամանակ
հասարակական բարեկեցութիւն, բարօրութիւն— այդ
ձեռք կարելի կը լինի արտայայտել մարդկային
բնական ձգտումները: Գիտութիւնն առաջադիմու-
թեան ղեկն է. նա տալիս է նրան այս կամ այն
ուղղութիւնը, հետեւելով խելքի բնական ու ա-
ռողջ պահանջներին: Գիտութիւնն ամենից շատ
է նկատում որոշ ժամանակի մարդկային բնական
ձգտումները, երևան հանում նրանց, թեօրհանւում
գնում, քննում ու ըմբռնում է և լուսաբանու-
թեան ենթարկում: Նա դարձ է տալիս ու առաջ
մղում մարդկային բնական ու կենդանի ձգտում-
ները: Այդպիսով նա հանդիսանում է անհրաժեշտ
զինված, քննարկում ու շարժող մարդկային բնական
ձգտումներին: Ուրիշ է գրականութեան դերը: Գը-
րականութիւնը մարդկային առաջադիմութեան
ֆակտորներից մէկն է: Նա հանդիսանում է իւրեւ
որոշ ժամանակի և ժողովրդի բնական ձգտումնե-
րի արտայայտիչ: Նա, իրականում, գիտական թէ-
մայի, նկարագրում, պատկերացում, կեանքի է
վերածում այն, ինչ կատարվել է, ինչ կատար-
վում է և յայտնում այն, ինչ պէտք է կատարել:
Պատկերացնելով և երևան հանելով այն, ինչ կա-
տարվել է,— նա պէտք է հետեւն պատմական ու
կենսական ճշմարտութեան, պատկերացնելով այն,
ինչ կատարվում է,— նա պէտք է հաւատարիմ լի-
նի իրականութեան ճշմարտութեան. յայտնելով,
ենթադրելով այն, ինչ պէտք է կատարել,— նա
պիտի հետեւն առողջ լոգիկայի, տրամաբանու-
թեան, և գիտական ճշմարտութեան: Այսպէս
սերեմ, ճշմարտութիւնը որպէս առհասարակ

թէ ուսումնական և թէ բարեգործական
ընկերութիւնների նիստեր, չը կայ դպրո-
ցական կեանք և հոգաբարձական նիստեր,
չը կան այլ և ուր թատրոնական ներկայա-
ցումներ, դադարել են պարահանդէսներ,
երեկոյթիւններ, քաղաքային վարչութիւնը
վերջ է տուել իր պալկայի նիստերին, ամեն-
քաղաքային կենտրոնը և վերջում, հասարակա-
կան և առևտրական կեանքը ձեռնվայ պէս
այլ և ուր. չէ գալիս, նոյն իսկ վարչական
գործունէութիւնը թուլանում է, իսկ քա-
ղաքական կեանքը, ընդհանրապէս, անգոյն
է դառնում ամառ ժամանակ:

Մամուլը արտայայտութիւն լինելով հա-
սարակական և քաղաքական կեանքի, երբ
դրսի կեանքը անշարժութեան մէջ է մնում,
լրագրութիւնն էլ իր համար գրելով սը-
նունդ չունի... Երբ կեանքը չը կայ, կամ
կեանքը դանդաղ է ընթանում, լրագրու-
թիւնն էլ սկսում է անգոյն դառնալ:
Եւ ճշմարիտ, ի՞նչի մասին կարող է գը-
րել լրագիրը ամառ ժամանակ, երբ ամբողջ
քաղաքում այլ և ուր կայ ոչ մի հասարա-
կական գործունէութիւն: Ի՞նչի մասին
կարող է գրել յատկապէս հայոց լրագիրը,
երբ ամառ ժամանակ չը կան ոչ պարա-
հանդէսներ, ոչ երեկոյթիւններ ու կօնցերսներ,
ոչ փերզամանտական ընկերութեան նիս-
տեր, ոչ Գումայի նիստեր, ոչ Բարեգործա-
կան ընկերութեան ժողովներ, ոչ Ներսի-
սեան դպրոցի հոգաբարձական նիստեր, և
այլն, և այլն...

Մնում է հայոց լրագրին ամբողջ ամառ-
վայ ընթացքում դադարել դրսի հարցերով,
լցնել իր էջերը այլ և այլ բանասիրական
ներով, խառն լուրերով, զաւառական լրը-
թականութիւններով և ներքին լուրերով...

Այդ բոլոր անախորժ հանգամանքները
աչքի առաջ ունենալով, մենք այս ամառ

գրականութեան, նոյնպէս առանձին գրական
գրութեան հիմնաքարը պէտք է լինի:

Գրական գրութեան, հայելու նման, պէտք է
ուղիղ ու ճիշտ կերպով պատկերացնել իր մէջ
այն կեանքը, այն երեւոյթները, որ նա երևան
է հանում: Այդ ճշգրտութիւնը կայանում է հաւատար-
մութեան մէջ դէպի մարդկային բնութիւնը և դէ-
պի նրա բնական ձգտումները: Ամեն մի շեղումն
այդ ուղղութիւնից գրական գրութեան տալիս
է անբնականութիւն, չինքն ուղի. այդպիսի գրութեան
ընդունումն անցնելով բնական ընթացքի փոխարէն ա-
ռաջանում են չինքն, իրար հետ կարկտած,
այսպէս ասել՝ անհարթ անցքեր ու կեղծ երևոյթ-
ներ, որոնք լուծենալով հաստատ յենարան՝ լուրջ
ու անաչառ կրիտիկայի առջև լիապէս կորցնում
են իրանց նշանակութիւնն ու արժէքը: Այդպիսի
գրութեանը ոչ միայն չեն լուսաւորում մարդ-
կային գիտակցութիւնը, ոչ միայն չեն լայնացնում
նրա հասկացողութեան հորիզոնը, այլ ընդհակա-
ռակ՝ արգելք են հանդիսանում առողջ հայացք-
ների առաջանալուն նրա մէջ, միջանցում նրա
գիտակցութիւնը և բխցնում նրա հասկացողու-
թիւնը: Լաւ կամ վատ հայելին իր մէջ մաքուր
կամ անմաքուր կերպով է պատկերացնում մի
յայտնի առարկայ,— նոյնն է և գրական լաւ կամ
վատ գրութեանը այս կամ այն կեանքի, երևոյթների
նկարագրութեան, պատկերացման ճշգրտութեան վե-
րաբերութեամբ: Պատկերացում, որ գրական գրութեանը
մէջ է բերում, պէտք է ունենան կենսական ճը-
շգրտութիւն, գրութեանը մէջ բերած կեանքի պատ-
կերացման ճշգրտութիւն, հեղինակի հայեացքի լայ-
նութիւն և ընդարձակութիւն, հոգեբանական ճը-
շգրտութիւն և կենդանութիւն ու ճշգրտութիւն նկարա-
գրված երևոյթների մէջ— ամփոփելով իր մէջ այդ
յատկութիւնները՝ գրական գրութեանը ստանում է
արժանաւորութիւն:

Այնքան նմանապէս մի քանի խօսք այն դերի
մասին, որ խաղում է կրիտիկան գրականու-
թեան վերաբերութեամբ:
Կրիտիկոսը վերցնելով վիպական կամ բնա-
կան գրութեանը նախ օրջումն ու զանազանում է

վայ միացած երկու ամսվայ ընթացքում
հարկադրված կը լինենք մեր թերթի մէջ
զխտաւոր տեղը Բ ա ն ա ս Ի Ր Ա Կ Ա Ն բաժ-
նին յատկացնել: Մենք կաշխատենք, առ-
հասարակ, լցնել մեր լրագրի էջերը գիւ-
րամառ նիւթերով՝ փոքրիկ յոգնածներով,
զաւառական նամակներով, թեթեւ առաջ-
նորոգներով, ամեն տեսակ լուրերով, քա-
ղաքական կարճ տեսութիւններով— բայց
մեր գլխավոր ուշադրութիւնը պէտք է
դարձնենք բանասիրական յոգնածների
վրա, աշխատելով բազմակողմանի դարձնել
այդ յոգնածների նիւթերը և դիւրամբո-
նելի անել ընթերցողների համար նրանց
բովանդակութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Յունիսի 25-ին

Ձմեռ է: Նայիր այդ ժամանակ գիւղացու երե-
սին, տես, կարծես նա ասում է. «Ի՞նչ անեմ:
Եւ ճշմարիտ, նա ունի իրաւունք այդ ասելու, ո-
րովհետեւ նրա զօրեղ ձեռները, նորա արագաշարժ
ոտները, նորա ամրակազմ մարմինը և, վերջա-
պէս, նորա հոգին՝ չեն ուղղում հանգիստ, անգործ
մնալ: Նորա մէջ կայ այնքան կենդանի, որ նա
կարողանում է կատարել այն, քաղաքացու հա-
մար, հրէշաւոր աշխատանքը. նորա կենդանի
հաւաքվել մնացել է, ուղղում է դուրս գալ, բայց
ճանապարհ չը կայ: Երկար մնալուց յետոյ նրա
մի մասը բխանում, սփռւնում է, իսկ միւս մա-
սը ճանապարհ, միջոց գտնելով՝ դուրս է գալիս,
բայց դուրս է գալիս բամբասանքի, ստախոսու-

նրա վատտերը և դրանց հիման վրա տալիս է իր
դատողութիւնները, յիմնելով որոշ համոզումների
վրա: Նա լուսաբանում է հեղինակի այն դիտո-
ղութիւններն ու մտքերը, որոնք նշանաւոր դեր
են խաղում գրութեան իմաստը վերաբերութեամբ:
Նա հետևում է անցքերի զարգացմանը և ընթաց-
քին, նշանակում է թէ՛ որքան դրանք ճիշդ են
ու բնական: Գիտում է թէ՛ որքան ճիշդ է հա-
կացել հեղինակին այն կեանքն ու երևոյթները
որ դարձել է իր գրութեան նիւթը և թէ՛ ինչ է
նա նկատել այդ կեանքի ու երևոյթների մէջ և
ինչ նրա աչքից ծածկվել է: Նա ըմբռնում է
գրութեանը ողին, բնաւորութիւնն ու նշանակու-
թիւնը և ապացուցանում նրանց լաւ կամ վատ
կողմերը, նրանց օգուտը, կամ վնասը: Յիմնելով
հաստատ ու որոշ համոզումներն ու հայեացքներն
վրա, նա պատճառաբանութիւններ է առաջ բը-
րում դեր կամ դէմ գրութեանը: Նա գիտում է
թէ՛ գրութեանը միջև ու արժանան է ամփոփում
իր մէջ այն յատկութիւնները, որոնք պէտք է
կազմեն նրա արժանաւորութիւնը և դրանից հե-
տեւ աստիճանի վրա է թէ՛ հեղինակի տաղանդն
ինչ աստիճանի է հասած: Հեղինակին իր պակա-
սութիւններն ու արժանաւորութիւնները նկատե-
լով կրիտիկայի մէջ՝ աշխատում է միւս անգամ
խոյս տալ առաջիններից և զարգացնել վերջին-
ները: Միւս կողմից հասարակութիւնն էլ կրիտի-
կայի անհրաժեշտ օգնութեամբ ու աջակցու-
թեամբ իմանում է թէ՛ ինչպէս պէտք է վերա-
բերվել դէպի հեղինակին ու նրա գրութեանը: Այդ
կրիտիկայի մէջ արդէն կայ իրական ու շօշափելի օ-
գուտ, որ տալիս է կրիտիկան:

Թե՛ բանաստեղծական, թէ՛ վիպական, թէ՛ բն-
ական գրութիւնը կրիտիկոսը ենթարկելով ա-
նա լի դի, պէտք է որոշէ թէ՛ նա միջև ու ար-
ժանան է յայտնում արտայայտիչ որոշ հայեա-
ցի և որոշ ժողովրդի կամ ընդհանուր մարդկու-
թեան բնական ու կենդանի ձգտումներն ու հա-
կացողութիւններին: Գրական կրիտիկան անհրա-
ժեշտ նեցուկ ու շարժող է գրականութեան առա-
ջադիմութեանը: Եւ այդ պատճառով որ և է գրա-

թեան, զանազան տեսակ անբարոյականութեան և
վառված, շատ զօրեղ ու ցնորական երեւոյթու-
թեան ձեւերով: Գիւղացին պարապ է, դորժ չունի.
նա կամ բամբասում է, կամ ստեր է հնարում ու
խօսում, կամ կուռում է իր դրացու հետ և դատա-
րանների դռներում քաշ գալիս, կաշառք ուտեց-
նելով սորան նորան և իր կղբայրներին մնասե-
լով և կամ «գոմի օղայում» նստած հէքիաթներ է
լսում և պատմում: Այս գիւղացու ձեռնվայ բո-
լոր գործերը: Ի՞նչպէս կարող է մի մարդ չեն-
թարկվել այդպիսի հանգամանքների ազդեցու-
թեան, չենթարկվել հազար ու մի տեսակ անբա-
րոյականութեան. ի՞նչպէս կարող է նա դիմագրել,
երբ նրա մէջ ոչ մի հաստատուն բան չը կայ,
երբ նրանում ամեն մի համոզմունք տատանվում է:

Բայց, ոչ ոք չը կայ. հայ բուրժուա-ինտելի-
գէնտը մտած իր տաք բնակարանը՝ շինիս ըզ-
գացմունքներով ու ցանկութիւններով է բաւա-
կանանում: Հայաստանը հօ վաղուց է կորել, ան-
յայտացել. նա երևում է միայն զարնանք: Իսկ
երիտասարդների մի մասը արդէն ծերացել են,
նրանց մէջ ամեն բան արդէն մեռել է, նրանք
կենդանի դիմելներ են, շարժվող մեռելներ, և,
դեռ այդ բաւական չէ, իրանց թուլութիւնը ցոյց
չը տալու համար, սկսում են պախարակել գիւ-
ղացուն, քաղաքացուց վատ անուանել ու հայո-
յել: Եւ այս բոլորը անում են միայն նրա համար,
որ իրաւունք ունենան ասելու, թէ՛ մենք ընդու-
նակ ենք գործելու, եռանդ ունենք, բայց ո՞ւր
օգնենք. քաղաքացուն օգնել չարժէ, որովհետեւ
նա բոլորովին կորած է, նրան դուրս հանել այդ
գրութիւնից անհնարին է, իսկ գիւղացին— նրան-
ցից աւելի վատ է, ուրեմն ու ոչինչ չը կայ անե-
լու: Մնում է միայն ձեռքերը ծալել ու նստել:

Երիտասարդների երկրորդ մասն էլ զբաղված
են միայն իրանց «սպարդէղով»: Մնում են մի

կան գրութեանը առանց հաստատութիւնների գո-
վելը, նոյնպէս և առանց հաստատութիւնների
պախարակելը մնասկար ազդեցութիւն է ունե-
նում թէ՛ գրականութեան զարգացման և թէ՛ հե-
ղինակի տաղանդի զարգացման վրա: Ինչ որ կը-
րիտիկոսն ասում է թէ՛ գրել և թէ՛ դէմ գրութեան-
քին պէտք է անպատճառ. բայց արդէն ու պաշտ-
պանի, պահպանելով սեփական համոզումներն ու
հայեացքներն: Ներդաշնակութիւնն Գա կրիտիկայի
պահանջն է: Մէկ անգամ կրիտիկոսը չէ կատա-
րում այդ պահանջը, նրա կրիտիկան յայտնվում
է մնասկար և ինքը կրիտիկոսն՝ աղմուկ հանող,
գրախօս:

Եթէ նայել ու քննադատել թիւրքահայ գրակա-
նութիւնն այն տեսակետից, որ ևս առաջ բերել
վերն, կարելի է դալ այն կողակացութեան, որ
նա ընդհանրապէս արժանաւորութիւն չունի և չի
էլ ունենայ, եթէ չը թողնի իր սխալ ու մնաս-
կար, բացասական ուղղութիւնը: Իր անբնակա-
նութեամբ, իր անհասկացողութեամբ մարդկա-
յին բնութեան և թեթեւ վերաբերութեամբ դէպի
գրական գործը— թիւրքահայ գրականութիւնը հե-
ռու չի երթայ:

Իսկ պ. Հրանտ Ասատրի նման քննադատնե-
րը (?), որոնց թիւն է թիւրքահայերի մէջ լեգիօն,
լաւ կանէին, եթէ իլլիւղիաների, մոլորութիւննե-
րի մէջ չընկնէին և ուրիշներին էլ իրանց հետ
միասին չը գցէին: Գոյաբանել ամեն մարդ կա-
րող է, բայց դիտելու և կրիտիկա անելու ձիրքն
աշխարհում շատերին չէ տրված: Առաջադիմու-
թեան ֆակտորներն իրաւ,— որոնցից մէկն է և
գրականութիւնը,— պէտք է արթնան ու առողջ
միտք և հայեացք ունենալ: Նա, ով գրելով մի-
տում է սպիտակ թուղթը և կարողանում այսպէս
կամ այնպէս յայտնել իր միտքն ու տպաւորու-
թիւնը՝ դեռ գրող չէ անուանվում. գրողն ձիրք
ու տաղանդ է հարկաւոր:

Լ. Ենց

ների միջնորդութեան ժամանակաւ կառավարելի Նախկին արտաքին գործերի միջնորդ. Արտաքին (այժմեան դիպլոմատական գործակալը Բէլլորադով) — ներքին գործերի միջնորդ. մայր Պետրով (գործաւանակի շտաբի ղեկավարը) — պատերազմական միջնորդ. Չուսով — ժողովրդական լուսավորութեան միջնորդ:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 1 յուլիսի «Биржевыя Ведомости» լրագրի հրատարակութեան նորից թողարկումը է:

ՓԱՐԻՉ, 1 յուլիսի: Պատերազմական միջնորդի ցանկութեան արդարեւ ժողովը նշանակեց այսօրվայ համար հեծելազորքի և հետակ զորքի թիւը մեծացնելու մասին օրինադրի ընդունելու: Բուլանտէի մասին արդարեւ միջնորդութեանը պատճառով արդարեւ ժողովը նախագահ Ֆլոկէ հրաժարական տուեց, սակայն ժողովը միաձայն որոշեց չընդունել նրա հրաժարականը:

ՎԻԵՆՆԱ, 1 յուլիսի: Այստեղ հասաւ քաղաքական պատգամաւորութիւնը Կորուրդեան իշխանին ընտրութեան թուովը յանձնելու համար:

ԲԵՂԳՐԱՎ, 1 յուլիսի: Թագուհին երէկ հասաւ այստեղ և ընդունեցաւ թագաւորից և միջնորդներէր: Միջնորդական ճշմարտամբ մասին լուրերը հիմնովին սխալ են:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 1 յուլիսի: Առաջին ներքին փոխառութեան այսօրվայ տրամադրութեամբ գումարները ընկան հետեւեալ տոմսերին:

№ սերիայի	Տոմսի քանակ	Գումարը:	№ սերիայի	Տոմսի քանակ	Գումարը:
7.096	12	200.000	341	48	
15.940	1	75.000	8.495	25	
9.920	18	40.000	10.336	25	
13.813	11	25.000	12.806	9	
14.696	42	10.000	14.544	1	
12.093	7	10.000	9.562	49	
5.834	11	10.000	18.328	23	
			4.995	39	
2.072	21		4.326	7	
15.143	15		12.187	30	
5.329	32		7.464	20	
16.550	39		16.158	41	
9.913	13		8.547	20	
11.497	13		7.824	38	
15.313	19		14.554	11	
4.760	28		13.013	13	
10.579	22		8.209	16	
9.764	17		13.938	28	
4.234	32		8.082	48	
11.557	38		9.549	20	
8.573	35				

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 30-ին

Ռուսաց 1 լուրը 1 օնցունի վրա արժէ	217 3/32	պէնս.
— — — — —	180 1/4	պէ.
— — — — —	223 1/8	սան.
Ռսկի — — — — —	9	34 4.
Մարապին կուպոններ	180	25
Արծաթ — — — — —	1	27
Բորսային դիվիդենդներ	45 3/8	6 1/2 0/0
Պետակ. բանկ. 5 0/0 տոմս 1-ին շրջանի	100	—
— — — — —	2-րդ	99
— — — — —	3-րդ	99
— — — — —	4-րդ	99
— — — — —	5-րդ	99
— — — — —	6-րդ	—
Արեւելեան 5 0/0 փոխառութ. 1-ին շրջ.	98	50
— — — — —	2-րդ	98
— — — — —	3-րդ	98
Ներքին 5 0/0 առաջին փոխառութ.	261	—
— — — — —	246	25
5 2 0/0 բէնտա	102	—
Ոսկեայ բէնտա	192	50
Եօթնրորդ կօնսօլիդաց. փոխառութեան	167	—
Նոր երկաթուղային բէնտա	99	62
5 0/0 գրաւական թղթեր կալուած.	—	—
— — — — —	169	50
— — — — —	98	75
5 1/2 0/0 գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի	99	—
6 0/0 գրաւակ. թղթ. Խարկովի կալ. բան.	103	—
— — — — —	102	62
— — — — —	102	37
— — — — —	102	75
— — — — —	102	75
— — — — —	102	50
— — — — —	102	50
— — — — —	102	50
— — — — —	102	50
— — — — —	27 և 43 տ.	—
— — — — —	18 և 43 տ.	—
Վ. օլտակօ-Կամսկի բանկի ակցիաները	703	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	274	—
Բիքինսկ-Վ. օլտակի ընկ.	96	75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա-գացիաներ.	95	50
Մոսկովայի քաղաք. օրվա-գացիաներ.	96	50
Օդեսայի — — — — —	95	50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	—	—
Նոր փոխառութիւն.	83	87
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը	—	—
Ֆոնդերի վերաբերմամբ ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՄԻ ՕՐԻՈՐԴ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ Ուղևորվելով դէպի արտասահման, պատու ունի յայտնելու որ իր բացակայութեան ժամանակ, յուլիսի 1-ից մինչև սեպտեմբեր ամիսը, իր յաճախորդները կարող են դիմել մանկաբարձուհի Խոջախանտեանին, որի հասցէն հետեւեալն է. Частная лечебница, Эриванская площадь.

1—2

ԽԱՐԱՍՈՒՐԱԶԱՐԻ Երկսեռ. դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է որ դպրոցի համար հարկաւոր է ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԻ ուսուցիչ: Յանկացողները թող դիմեն պայմանների մասին «Մշակի» խմբագրատունը:

2—5

ՀԱՐԱՍՈՐԻ ԵՄ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՄ ՎԱՐԺՈՒՂԻ Ուսուցիչը պէտք է դասախօսի թուրքալեզուներին և հայոց պատմութիւնը, իսկ վարժուհին պէտք է պարսկէ և անգլերէնէ: Յանկացողները շատ շուտով պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեան մանրամասն պայմանները իմանալու համար: Դպրոցի համար աւելի յարմար կը լինի եթէ ուսուցիչը և ուսուցչուհին ամուսիններ լինեն:

2—3

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ
ԲԱՅՅԻԻ
ԿԱՅԵՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
Գինն է 2 րուբլի 50 կօպ.
Հանապարհի ծախսը հեղինակի վրա է: Գիրքը բաղկացած է 722 մեծատիպ երեսներից: Վաճառվում է «Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում» և հեղինակի մօտ: Բաժանորդները կանխապէս պէտք է յայտնեն իրանց հասցէն, եթէ տեղափոխվել են իրանց նախկին տեղից:

3—10

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
Александръ Самойловичъ
ФРЕНКЕЛЬ
перебѣжалъ въ КУРИ, близъ памятника Воронцова, Мостовая ул. д. Макера.
Երդուեալ հաւատարմատար Ալեքսանդր Սամոյլովիչ Ֆրէնկէլ տեղափոխվեց Կուրի, վ. օրոցօվի արձանից ոչ հեռու, Մոստովայա փողոց, տուն Մակիերի:

2—3

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՒԱՆՏԻ առեւտրական գրասենեակը լինելով ՄԻԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի Փարիզի և Նիտ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետեւեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի միացորդը, բուրդ, բամբակ, ցորենի կէշ, նաւթ և ընդհանրապէս կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում: Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италия).

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)
ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ
ՍՈՒՆԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՅՑ (GIRONDE)
Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ծնօտը:
Գինը դուրսը 2 և 8 ֆրանկ. ֆոլիոն՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատասխան արկղիկը՝ ֆրանկ:
Հիմնարկութիւնը դրոյութիւն ունի 1804 թից.
Վրտարար արեւա ՍԵԳՈՒՆ, Բորդօ (Ֆրանսիա).
Թիֆլիսում ծախվում է պ. Բերկովիչի մազաղինում և պարֆումէրների ուրիշ մազաղիներում վԱՐԴԻԱՎԱՍՏՈՒՄ Է. Ա. Լեկէնի և Գ. Ա. Օտիկի մօտ:

37—48

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուլիսի վերջին լոյս կը տեսնի

«ՍՈՒՍԱԿ»

Լիակատար երգարանի հինգերորդ հատորը: Բաժանորդ գրվողները պէտք է յայտնեն իրանց ցանկութիւնը մինչև յուլիսի 25-ը: Բաժանորդների անունները կը տպվեն «Սոսակի» վերջում: Իւրաքանչիւր օրինակի բաժանորդագինն է ՄԻ ՐՈՒՐԻՒՆ ՀԱՅՑԵՍ. священнику Григорию Григорьянцъ въ Баку.

1—3

«Ա.Ղ.Բ.Ի.Ի.Ր»

Լոյս տեսաւ № 7 (յուլիսի) և ուղարկվեց բոլոր բաժանորդներին

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

№ 7

Չորս եղանակներ. Մուշկ Մամիկոնեան
Ղալար-Դանասի (հեքիաթ). Հասո
Վահան Մամիկոնեան (Հայ. Պատմութիւնից). Ա. Բաբայանեանց
Ծննդավայր (բանաստեղծութիւն). Աղէք. Մատուրեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան դրոյցներ (Գիտանդէլից). Խաչիկ

ՏԵՂԵԱՍԳՐԱՎԱՆ ՆԱՄԱՎԱՆԻ

Կաթ. Թ. Ն. Տէր-Աւետիքեան

ՀԵՏԱՔՐԻՐ ՏԵՂԵՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Միլիոնից ազատուելու միջոց: Մազամորթները հակիթների մէջ: Ան անձեր: Դնչառութեան մասին:

ԱՅԼԵՆԱՅԻ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ: Առաջարկութիւն: Դուտասերուկ: Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների, կրիպտոգրամի, տառադարձութեան և բիբլոսի բացատրութիւնները:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, յուլիսի 8-ին, ՄԵՐՈՒ (MEURTHE) շոգնաւոր, նաւապետ ՍԵՐԵՆՆՈՆ (SÉRENON) ղուր կը դնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծառնի զայլերէում, № 103.

4—4